

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԳՆ-ԳՀԾՁԲ-19/1-2**

ք. Երևան

«25» դեկտեմբեր 2018թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Մելիքյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Լալայանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2825000 (երկու միլիոն ութ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<p>Պ ա տ վ ի Ր ա տ ու ՀՀ արտաքին գործերի նախարարություն ք.Երևան, Վ. Սարգսյան 3 ՀՎՀՀ՝ 02527728 Հ/Հ 900011018414 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն.վարչություն</p>	<p>Կ ա տ ա Ր ո Ղ Ֆլեշ Մոտորս ՍՊԸ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31 «Արարատրանկ» ՓԲԸ Հ/Հ 1510012745550100 ՀՎՀՀ 00873228</p>
<p>Գլխ. Քարտուղար ----- Վ.Մելիքյան <small>(ստորագրություն)</small> Կ.Տ.</p>	<p>Տնօրեն ----- Ա. Լալայան <small>(ստորագրություն)</small> Կ.Տ.</p>

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50111170	5 տեղ հետևի տանող	դրամ	1050000	1	ք. Երևան, Ն.Տիգրանյան 1 փակուղի 1	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 15.12.2019
2	50111170	5 տեղ առջևի տանող	դրամ	1775000	1	ք. Երևան, Ն.Տիգրանյան 1 փակուղի 1	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 15.12.2019

NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների ²	
		Չափաբաժին 1 5 տեղ հետևի տանող	Չափաբաժին 2 5 տեղ առջևի տանող
		Այլ պետությունների արտադրանք (Գերմանական, Ճապոնական և Հարավ Կորեական արտադրության ավտոմեքենաներ)	
1	2	3	4

SU-1 ներառվող ծառայությունների անվանում			
1	Բռնկման համակարգի ստուգում	0	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0	0
3	Յուղման համակարգի ստուգում	0	0
4	Արտացման համակարգի ստուգում	0	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում		
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0	0
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0	0
13	ABS համակարգի ստուգում		
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	40000	50000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0
16	Թափքի վիճակի ստուգում	0	0
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0	0
18	Շարժիչի հանում և տեղադրում	150000	150000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիստե) դեպքում	40000	50000
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0
22	Շարժիչի վերանորոգում	0	0

23	Նույնը DOHC դեպքում	0	0
24	Նույնը V6-ի դեպքում	0	0
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	10000	10000
26	Բ/լիստեռի կափարիչի հանում և տեղադրում	0	0
27	Նույնը աջի համար (V6)	0	0
28	Նույնը ձախի համար (V6)	0	0
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	40000	40000
30	Նույնը աջի համար (V6)	0	0
31	Նույնը ձախի համար (V6)	0	0
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	0	0
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	15000	15000
34	Փականի խցուկի փոխարինում	10000	10000
35	Նույնը V6-ի դեպքում	0	0
36	Բաշխիչ լիստեռի հանում և տեղադրում	0	0
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	0	0
38	Նույնը V6-ի աջի դեպքում	0	0
39	Նույնը DOHC դեպքում	0	0
40	Բաշխիչ լիստեռի խցուկի փոխարինում	0	0
41	Հրիչների փոխարինում SOHC	10000	10000
42	Նույնը DOHC դեպքում	0	0
43	Ատամնավոր փոկի փոխարինում	30000	30000
44	Նույնը DOHC դեպքում	0	0
45	Նույնը V6-ի դեպքում	0	0
46	Ծնկածն լիստեռի առջևի խցուկի փոխարինում	5000	5000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0
48	Նույնը DOHC դեպքում	0	0
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0
50	Նույնը V6-ի դեպքում	0	0
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0
52	Ծնկածն լիստեռի հետևի խցուկի փոխարինում	15000	15000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0
54	Մխոցային օդակների փոխարինում	0	0
55	Նույնը DOHC դեպքում	0	0
56	Նույնը V6-ի դեպքում	0	0
57	Թափանիվի հանում և տեղադրում	0	0
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
58	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	5000	5000
59	Յուղի պոմպի փոխարինում	0	0
60	Նույնը DOHC դեպքում	0	0
61	Նույնը V6-ի դեպքում	0	0
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	0	0
63	Բռնկման կարգավորում	5000	5000
64	CO կարգավորում	3000	3000
65	խարնարակի հանում և տեղադրում	0	0
66	խարնարակի վերանորոգում	0	0
67	Օդի գտիչի փոխարինում	5000	5000
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	5000	5000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	6000	6000
70	Բենզամղիչի փոխարինում	8000	8000
71	Վառելիքի գտիչի փոխարինում	5000	8000
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	0	0
73	Տրամյուրի հանում և տեղադրում	0	0
74	Տրամյուրի վերանորոգում	0	0
3. Սառեցման և արտածման համակարգ			
75	Հովհարի փոկի հանում և տեղադրում	5000	5000
76	Հովհարի հանում և տեղադրում	5000	5000
77	Ռադիատորի հանում և տեղադրում	12000	12000
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0
80	Ռադիատորի վերանորոգում	45000	45000
81	Թերմոստատի փոխարինում	10000	12000
82	Ջրի պոմպի փոխարինում	10000	10000
83	Նույնը DOHC և V-6 դեպքում	0	0
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0
85	Ջրի պոմպի վերանորոգում	0	0
86	Նույնը DOHC դեպքում	0	0
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0
88	Ընդարձակող բաքի փոխարինում	1000	1000
89	Խլարարի հանում և տեղադրում	1000	1000

90	Նույնը DOHC դեպքում	0	0
91	Ռադիատորի փոդրակի հանում և տեղադրում	0	0
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ			
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	15000	15000
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	0	0
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	25000	25000
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	5000	5000
96	Կցորդման ճուպանի հանում և տեղադրում	5000	5000
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	25000	25000
98	ՓՏ-ի վերանորոգում	80000	80000
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	0	0
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	0	0
101	Վազքաչափի շարժաբեքի փոխարինում	2000	2000
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	25000	25000
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	15000	15000
104	Նույնը V6-ի համար	0	0
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	30000	30000
106	Նույնը V6-ի համար	0	0
107	ԱՓՏ-ի վերանորոգում	200000	200000
108	Նույնը V6-ի համար	0	0
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	20000	20000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	0	0
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	0	0
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	0	0
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	0	0
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	0	0
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	10000	0
116	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	10000	0
6. Առջևի և հետևի կամրջակներ			
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	0	0
118	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում	0	0
119	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	0	0
120	Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում	5000	0
121	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	5000	0
7. Կախոց			
122	Առջևի կախոցի լիկատար քանդում և հավաքում	5000	5000
123	Տրավերսի հանում և տեղադրում	20000	20000
124	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	15000	15000
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	8000	8000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	8000	0
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000	0
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0	0
129	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	5000	5000
130	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	5000	5000
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5000	5000
132	Չսպանակի հանում և տեղադրում	0	0
133	Չսպակի հանում և տեղադրում	0	0
134	Չսպակի վռանների փոխարինում	0	0
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	6000	6000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	7000	7000
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	7000	7000
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	5000	5000
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	6000	6000
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	1000	1000
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	7000	7000
142	Վերևի լծակի վռանների փոխարինում	5000	5000
143	Գնդե հողակապերի փոխարինում	5000	5000
144	Ծայրականների հանում և տեղադրում	3000	3000
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	0	0
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4000	4000

147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	0	0
148	Հետևի զսպանակի փոխարինում	0	0
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	6000	6000
150	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	5000	5000
151	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	5000	5000
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	3000	3000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	3000	3000
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	3000	3000
155	Անվաբացքի կարագավորում	8000	8000
156	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	5000	5000
	8. Ղեկային մեխանիզմ		
157	Ղեկային կայունի հանում և տեղադրում	25000	25000
158	Նույնը V6-ի համար	0	0
159	Ղեկային կայունի վերանորոգում	50000	50000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	0	0
161	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	0	0
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	0	0
163	Նույնը DOHC դեպքում	0	0
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	0	0
165	Նույնը DOHC դեպքում	0	0
166	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	0	0
167	Նույնը DOHC դեպքում	0	0
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	0	0
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	0	0
	9. Արգելակային համակարգ		
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	15000	15000
172	Գլխ. գլանի վերանորոգում	5000	5000
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	10000	10000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	10000	10000
175	Բանվ. գլանի վերանորոգում	2000	2000
176	Արգելակային համակարգի օդահանում	2000	2000
177	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	5000	5000
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	5000	5000
179	Առջևի սուպպորտի վերանորոգում	7000	7000
180	Հետևի սուպպորտի վերանորոգում	7000	7000
181	Արգելակային փողրակի փոխարինում	2000	2000
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	8000	8000
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	8000	8000
184	Հետևի կոճղակների փոխարինում	0	0
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	5000	5000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	5000	5000
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	1000	1000
188	ABS-ի հանում և տեղադրում	1000	1000
189	ABS-ի վերանորոգում	1000	1000
190	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	3000	3000
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	5000	5000
	10. Էլեկտրասարքավորում	5000	5000
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	2000	2000
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	8000	8000
194	Գեներատորի հանում և տեղադրում	0	0
195	Նույնը V6-ի դեպքում	0	0
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	8000	8000
197	Գեներատորի վերանորոգում	8000	8000
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	10000	10000
199	Մեկնարկիչի վերանորոգում	2000	2000
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում	1500	1500
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	5000	5000
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	3000	3000
203	Վազքաչափի հանում և տեղադրում	1000	1000
204	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	1000	1000
205	Սաքերի պանելի հանում և տեղադրում	20000	20000
206	Արագաչափի հանում և տեղադրում	1000	1000
207	Ազդանշանի հանում և տեղադրում	5000	5000
208	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	3000	3000
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	3000	3000
210	Ազդանշալային համակարգի տեղադրում	1000	1000
211	Մագնիստոլայի տեղադրում	1000	1000

212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	3000	3000
213	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	5000	5000
214	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	10000	10000
215	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	5000	5000
216	Էլեկտրական տվիչների փոխարինում	5000	5000
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում	4000	4000
218	Վառոցքի մոմերի փոխարինում	5000	5000
219	Կոնդիցիոների լիցքավորում	14000	14000
220	Կոնդիցիոների վերանորոգում	10000	10000
	11. Այլ ծառայություններ		
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում		
222	Ավտոմեքենայի վաճում	5000	5000
223	Անիվի հանում և տեղադրում	3000	3000
224	Անվաղողի վերանորոգում	1000	1000
225	Անիվի բայանսավորում	500	500
226	Անիվի վալց	1000	1000
227	CO-գողման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	1000	1000
228	հառատային աշխատանքներ	5000	5000
229	Փականագործի աշխատանքներ	10000	10000
230	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	10000	10000
		1489110	1324620
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափաբաժին 1 5 տեղ առջևի տանող	Չափաբաժին 2 5 տեղ հետևի տանող
	1. Շարժիչ		
1	Շարժիչի բլոկ	0	0
2	Շարժիչի գլխիկ	0	0
3	Բարձիկ	35000	35000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	10000	10000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	50000	50000
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	5000	5000
7	Շարժիչի փական դուրս մղող	10000	10000
8	Շարժիչի փական ներս մղող	10000	10000
9	Շարժիչի փականի խցուկ	10000	10000
10	Ծնկաձև լիսեռ	5000	5000
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	5000	5000
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	5000	5000
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	20000	20000
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	15000	15000
15	Հենակային տափողակ	1000	1000
16	Մխոց	1000	1000
17	Մխոցային օղակներ	30000	30000
18	Ատամնանիվ	2000	2000
19	Ատամնավոր փոկ	20000	20000
20	Շղթա	15000	15000
21	Հիդրոձգան	5000	5000
22	Հրիչ	5000	5000
23	Հիդրոհրիչ	15000	15000
24	Բաշմակ	10000	10000
25	Հանգստարար	5000	5000
26	Թափանիվ	10000	10000
27	Թափանիվի պսակ	5000	5000
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	2000	2000
29	Շկիվ	5000	5000
30	Շարժաթև	1000	1000
31	Կարտերի միջադիր	4000	4000
32	Միջադիր	5000	5000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	2500	2500
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	5000	5000
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	8000	8000
36	Յուղի գտիչ	5000	5000
37	Յուղի պոմպ	1000	1000
38	Յուղի պոմպի շարժաբեր	1000	1000
39	Յուղի ռադիատոր	1000	1000

40	Յուղի փողրակ	1000	1000
41	Յուղի ծորակ	500	500
42	Վառոցքի մոմ	5000	5000
43	Բենզոլաք	0	0
44	Խառնարակ	0	0
45	Խառնարակի վերանորոգման հավաքածու	0	0
46	Ինժեկտորի ֆորսունկա	15000	15000
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական	15000	15000
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական	0	0
49	Վառելանյութի գտիչ	15000	15000
50	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	0	0
51	Վառելանյութի փողրակ	1000	1000
52	Աքսելերատորի ճուպան	0	0
53	Օդի գտիչ	7000	7000
54	Ջերմաստիճանային տվիչ	5000	5000
55	Յուղի տվիչ	5000	5000
56	Բաշխիչ լիսեռի տվիչ	15000	15000
57	Օդի ծախսի տվիչ	5000	5000
58	Արագաչափի տվիչ	1000	1000
59	Հովհարի տվիչ	5000	5000
60	Ջրի տվիչ	5000	5000
61	Բենզոլաքի տվիչ	5000	5000
62	Մարման ընթացքի կարգավորիչ	5000	5000
63	Մարման ընթացքի տվիչ	15000	15000
64	Ղեկավարման համակարգիչ	0	0
65	Պարապ ընթացքի տվիչ	0	0
66	Դրոսելային փականի տվիչ	0	0
67	Թթվածնի տվիչ	15000	15000
	3. Սառեցման և արտածման համակարգ		
68	Հովհարի փոկ	8000	8000
69	Հովհար	1000	1000
70	Ռադիատոր	55000	55000
71	Ընդարձակող բաք	15000	15000
72	Ռադիատորի փողրակ	0	0
73	Թերմոստատ	13000	13000
74	Ջրի պոմպ	25000	25000
75	Ջրի պոմպի առանցքակալ	5000	5000
76	Ջրի պոմպի թևակ	0	0
77	Սառեցման հեղուկ 1 լիտր	4000	4000
78	Ջրի պոմպի տնանիվ	0	0
79	Հոլովակ	5000	5000
80	Փոկ	5000	5000
81	Փոկ կոնդիցիոների	0	0
82	Ծորակ	0	0
83	Խլարարի ներդիր	2000	2000
84	Խլարարի կախոց	1000	1000
85	Կրոնշտեյն	500	500
86	Անուր (Խամուտ)	5000	5000
87	Խլարար	5000	5000
88	Ռեզոնատոր	0	0
89	Վառարանի ռադիատոր	20000	20000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
90	Կցորդման բանվորական գլան	15000	15000
91	Կցորդման գլխավոր գլան	15000	15000
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	0	0
93	Կցորդման տանող սկավառակ	25000	25000
94	Կցորդման տարվող սկավառակ	25000	25000
95	Կցորդման առանցքակալ	10000	10000
96	Կցորդման փողրակ	0	0
97	Փոխանցման տուփ	150000	150000
98	ՓՏ-ի առջևի խցուկ	5000	5000
99	ՓՏ-ի հետևի խցուկ	5000	5000
100	ՓՏ-ի առանցքակալ	5000	5000
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ	5000	5000
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	5000	5000
103	ՓՏ-ի եղանիկ	5000	5000
104	ՓՏ-ի ատամնանիվ	5000	5000
105	Համաժամիչ	0	0
106	Մուֆտ	10000	10000

107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	50000	50000
108	ԱՓՏ-ի զտիչ	20000	20000
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	50000	50000
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	50000	5000
111	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	12000	12000
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր	20000	20000
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ	5000	5000
114	Հերմետիկ	5000	5000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
115	Բաշխիչ տուփ	0	0
116	Բաշխիչ տուփի խցուկ	0	0
117	Բաշխիչ տուփի առանցքակալ	0	0
118	Բաշխիչ տուփի ատամնանիվ	0	0
119	Բաշխիչ տուփի լիսեռ	0	0
120	Կարդանային լիսեռ	0	0
121	Էլաստիկ մուֆտ	15000	0
122	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	10000	0
123	Կարդանային լիսեռի խաչուկ	10000	0
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
124	Հետևի կամ առջևի կամրջակ	0	0
125	Ռեդուկտոր	0	0
126	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	0	0
127	Դիֆֆերենցիալ	0	0
128	Դիֆֆերենցիալի սատելլիտ	0	0
129	Տանող ատամնանիվի խցուկ	0	0
130	Տանող ատամնանիվի առանցքակալ	0	0
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ	0	0
132	Կիսատնի	0	0
133	Կիսատնու առանցքակալ	5000	0
134	Կիսատնու միջադիր	5000	0
135	Կիսատնու խցուկ	3000	0
136	Կարգավորիչ տափողակ	3000	0
	7. Կախոց	5000	5000
137	Տրավերս	1000	1000
138	Կրոնշտեյն	45000	45000
139	Ձախ կամ աջ հողակապ	10000	10000
140	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	30000	30000
141	Անվակունդ	5000	5000
142	Անվակունդի խցուկ	15000	15000
143	Անվակունդի ներքին առանցքակալ	0	0
144	Անվակունդի արտաքին առանցքակալ	10000	10000
145	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	0	0
146	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	2000	2000
147	Ձախ կամ աջ հողակապի խցուկ	15000	15000
148	Հարվածամեղմիչի թասակ	0	0
149	Ջսպանակ	40000	40000
150	Առջևի հարվածամեղմիչ	5000	5000
151	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	3000	3000
152	Հարվածամեղմիչի վռան	30000	30000
153	Ներքևի լծակ	5000	5000
154	Ներքևի լծակի վռան	10000	10000
155	Վերևի լծակ	30000	30000
156	Վերևի լծակի վռան	10000	10000
157	Գնդե հողակապ	10000	10000
158	Առջևի կայունարար	0	0
159	Առջևի կայունարարի վռան	5000	5000
160	Առջևի կայունարարի առջևի վռան	0	0
161	Հետևի զսպանակ	0	0
162	Հետևի ցնցամեղմիչ	35000	35000
163	Հետևի մետաղաձող (շտանգա)	15000	15000
164	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	5000	5000
165	Հետևի անկյունագծային լծակ	5000	5000
166	Անկյունագծային լծակի վռան	5000	5000
167	Ջսպակ (ռեսսորա)	0	0
168	Ջսպակի վռան	0	0
169	Ջսպակի միջադիր	0	0
170	Ջսպակի բռնիչ	0	0
171	Աջ կամ ձախ ձգան	5000	5000
172	Ծայրակալ	4000	4000

173	Ձգան մեջտեղի	6000	6000
174	Անվահեծ	15000	15000
	8. Ղեկային մեխանիզմ		
175	Ղեկային կալուն	100000	10000
176	Ղեկային կալունի առանցքակալ	5000	5000
177	Ղեկային կալունի խաչուկ	15000	15000
178	Հիդրոուժեղարար	10000	10000
179	Հիդրոուժեղարարի փոկ	5000	5000
180	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	0	0
181	Հիդրոուժեղարարի պոմպ	5000	5000
182	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	0	0
183	Ղեկային ձող	5000	5000
184	Ղեկային ձողի ծայրակալ	0	0
185	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	8000	8000
186	Ճոճանակ	0	0
187	Ճոճանակի վռան	0	0
	9. Արգելակային համակարգ		
188	Գլխ. գլան	15000	15000
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0	0
190	Վակուումային ուժեղարար	15000	15000
191	Բանվ. գլան	15000	15000
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0	0
193	Արգելակային փողրակ	2000	2000
194	Սուպպորտի ուղղորդիչ	5000	5000
195	Սուպպորտի մանժետ	6000	6000
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	25000	25000
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	25000	25000
198	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	10000	10000
199	Առջևի արգելակային սկավառակ	35000	35000
200	Հետևի արգելակային սկավառակ	35000	35000
201	Ձեռքի արգելակի ճոպան	1000	1000
202	ABS-ի տվիչ	5000	5000
203	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	3000	3000
204	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	3000	3000
205	Ձեռքի արգելակի ճոպան	1000	1000
	10. Էլեկտրասարքավորում		
206	Գններատոր	80000	80000
207	Գններատորի դիողային կամրջակ	15000	15000
208	Գններատորի ռելե	10000	10000
209	Գններատորի առանցքակալ	5000	5000
210	Ստարտեր	80000	80000
211	Ստարտերի ռելե	10000	10000
212	Ստարտերի ածուխ	15000	15000
213	Բենդերս	10000	10000
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	5000	5000
215	Առջևի լապտեր	5000	5000
216	Առջևի թարթիչ	5000	5000
217	Հետևի լապտեր	5000	5000
218	Հետևի թարթիչ	5000	5000
219	Արգելակային լապտեր	5000	5000
220	Լամպ	5000	5000
221	Էլեկտրական անջատիչ	5000	5000
222	Էլեկտրական տվիչ	5000	5000
223	Էլեկտրական չափիչ սարք	5000	5000
224	Բոնկման կողպեք	5000	5000
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	1000	1000
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	1000	1000
227	Վառոցքային լարերի խուրց	15000	15000
228	Վառոցքի մոմի ծայրակալ	2000	2000
229	Վազքաչափ	1000	1000
230	Վազքաչափի ճոպան	1000	1000
231	Արագաչափ	1000	1000
232	Ազդանշան	1000	1000
233	Ապակեվազիչ	5000	5000
234	Ապակեվազիչի շարժիչ	5000	5000
235	Դռների կենտրոնական փական	5000	5000
236	Ազդանշանային համակարգ	5000	5000
237	Մագնիտոլա	1000	1000
238	Էլեկտրաամբարձիչ	15000	15000

239	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	15000	15000
240	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	10000	10000

<p style="text-align: center;">Պ ա տ վ ի Ր ա տ ու</p> <p style="text-align: center;">ՀՀ արտաքին գործերի նախարարություն ք.Երևան, Վ. Սարգսյան 3 ՀՎՀՀ՝ 02527728 Հ/Հ 900011018414 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն.վարչություն</p> <p>Գլխ. քարտուղար ----- Վ.Մելիքյան <small>(ստորագրություն)</small> Կ.Տ.</p>	<p style="text-align: center;">Կ ա տ ա Ր ո Ղ</p> <p style="text-align: center;">Ֆլեշ Մոտորս ՍՊԸ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31 «Արարատրանկ» ՓԲԸ Հ/Հ 1510012745550100 ՀՎՀՀ 00873228</p> <p>Տնօրեն ----- Ա. Լալայան <small>(ստորագրություն)</small> Կ.Տ.</p>
--	---

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	5011170	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ

<p align="center">Պ ա տ վ ի ի ա տ ու</p> <p align="center">ՀՀ արտաքին գործերի նախարարություն ք.Երևան, Վ. Սարգսյան 3 ՀՎՀՀ՝ 02527728 Հ/Հ 900011018414</p> <p>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն.վարչություն</p> <p>Գլխ. Քարտուղար ----- Վ.Մելիքյան (ստորագրություն) Կ.Տ.</p>	<p align="center">Կ ա տ ա թ ո ղ</p> <p align="center">Ֆլեշ Մոտորս ՍՊԸ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31 «Արարատրանկ» ՓԲԸ Հ/Հ 1510012745550100 ՀՎՀՀ 00873228</p> <p>Տնօրեն----- Ա. Լալայան (ստորագրություն) Կ.Տ.</p>
---	---

« » 20 թ. կնքված
 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐՎ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.
 Պայմանագրի համարը՝ _____
 Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
 Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով
 Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը
 նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված
 ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և
 գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
 Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն